50. ԼԷՕ — Կորածներ. (վէպ, արտատպած Մուրճ ամսագրից:) Տփ. տպ. Ռօտինի. 168 էջ. 50 կ.:
[Քննադատութիւն՝ Մշակ. 1889. Թ. 36: Նոր-Դար. 1889. Թ. 203: Մուրճ. 1889. Թ. 11:]
51. ԼԸԿՈՒԷ ԷՌՆԷՍԹ — Բարոյախօսութիւն գկանանց. Թրգմ. Թագուհի Շ. Մելիքսազարեան: Կ. Պ.:
[Քննդտ. Արձագ. 1889. Թ. 27: Նոր-Դար. 1889. Թ. 196. 197. 198: Արեւելք. 1889. Թ. 1632:]
52. ԼՈՒՄԱՅԻ — Կողոպտած եկեղեցի, վէպ: Տփ. 1 ր.:
53. ԺԱՂԻԿ, հանդէս ազգային եւ քաղաքական: Գ. Տարի: Կ. Պ. Հրտ. Ա. Սազայեան. 100 ղշ.:
54. ԺԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ, պատկերազարդ հանդէս. (Բ. Շրջան ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑԻ:) Կ. Պ. տպ. եւ Հրտ. Ն. Կ. Պէրպէրեան: 40 ղշ.:
55. ԿԱՆԲՐԷ ԺՈՒԼ — Քուրթուշ աւազակապետ. Թրգմ. Օր. Մ. Հրտ. Մ. Ց. Գարամեան: Հտր. Ա: Կ. Պ. 20 ղշ.:
56. ԿԱՊՕՐԻՕ ԷՄԻԼ — Լըռուժի դատը. Թրգմ. Պետրոս Ատրունի. Հրտ. Ս. Տէօվլէթեան: Կ. Պ. 470 էջ. 12 ղշ.:
57. Հազար եւ մի Զրօյցներ Մանրավէպք. Տետր. Ա—Գ.: Կ. Պ. 7 ղշ.:
58. ՀԱԽՈՒՄԵԱՆ Ս — Մանիկ: Շուշի. տպ. Հոգ. Վարչ. 76 էջ. 40 կ.:
[Քննդտ. Նոր-Դար. 1889. Թ. 170: Մուրճ. 1889. Թ. 11:]
59. ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ: Գ. Տարի: Վիեննա, տպ. Մխիթ. 8 Ֆր. = 4 ր.:
60. ՀԱՆԴԷՍ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ, Բ. Տարի: Բ. Գիրք: Մոսկուա. տպ. Օ. Ս. Հերբէկ: Խմբ. Հրտ. Մ. Բարխուդարեանց. 1 ր. 50 կ.:
[Քննդտ. Արձագ. 1889. Թ. 47, 48, 49: Նոր-Դար, 1889. Թ. 207:]
61. ՀԵՂԻՆԷ կամ ծաղկանց կողովը, վէպ, Թրգմ. Տիկին Շողակաթ Ց. Տէր-Սարգսեան: Կ. Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 127 էջ. 100 փարայ:
62. ՀԻՆԴԼԵԱՆ Ց. Թ — Դասագիրք զաղղիերէնէ ի հայ թարգմանութեան: Կ. Պ. 5 ղշ.:
63. ՀՒՒԿՈՅ ՎԻԿՏՈՐ — Թշուառներ. Թրգմ. Գր. Չիլինկիրեան. Հրտ. Ն. Կ. Պէրպէրեան: Հտր. Է.: Կ. Պ. տպ. Պէրպ. 14 ղշ.:
64. ՂՈՒԴԱԽՃԵԱՆ Հ. Ա. Վ — Տարերք Սրբազան պատմութեան պատկերազարդ: Վենետ. տպ. Մխիթ. 75 սանդ.:
65. ՃԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ, (Բ եւ Գ. Տարի նոր ձեւով.) Կ. Պ. 10 ղշ.:
66. ՃԷՐՒՏԷՒ ՇԱՐԳԻՒՑԷ — (Հայատառ տաճկաբարբառ) լրագիր ամէնօրեայ: Ջ. Տարի: Հրտ. Տ. Ճիվէլէկեան. Կ. Պ. 144 ղշ.:
67. ՄԱՄՈՒՐԵԱՆ Մ — Առաջին ընթերցարան պատկերազարդ: Կ. Պ. տպ. Ն. Կ. Պէրպէրեան. 2 ղշ.:
68. ՄԱՍԻՍ, երկշաբաթաթերթ ազգային, գրական եւ քաղաքական: Կ. Պ. Հրտ. եւ Խմբ. Արեւելեան, 25 ղշ.:
69. ՄԱՎԵԱՆ Ց. — Սկզբունք բարոյական դաստիարակութեան (հետեւողութեամբ Կեսար Քանթուի:) Գ. Տպագր. Արմաշ. 5 ղշ.:
70. ՄԱՐԱՂԵԱՆ Ց. Ց — Քանդած օջախ, վիպական գրուածք: Հրտ. Ց.-Ս. Գրիգորեան: Ախալցխա, տպ. Մկրտիչ Ղալամքարեան. 64 էջ. 20 կ.:
[Քննդտ. Մուրճ. 1889. Թ. 11: Նոր-Դար. 1889. Թ. 183:]
71. ՄԱՐԳԱՐԵԱՆ Գ — Համառօտ Օսմանեան Պատմութիւն: Կ. Պ. տպ. Գ. Պաղտատլեան. 95 էջ:
72. — — Հաւատք, Յոյս, Սէր. բարոյալից թատերերգութիւն, Թրգմ.: Կ. Պ. 7 ղշ.:
73. — Վ. Ց — Ոսկեմատենիկ հայ տղայոց: (Բ. Մասն Սէրովբէ Ջէօտաքէանի:) Կ. Պ. 180 էջ. 4 ղշ.:
74. ՄԵԼԻՔ-ԲԱԽՏԱՄԵԱՆՑ Ց — Տանտիկին եւ խոհանոց (երկու մաս): Տփ: տպ. Ց. Մարտ. 308 էջ. 1 ր. 50 կ.:
75. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ Կ — Ոգելից ըմպելիների վնասակարութիւնը: Շուշի, տպ. Հոգ. վարչ. 10 կ.:
[Քննդտ. Նոր-Դար. 1889, Թ. 100:]
76. ՄԷՃՄՈՒԱՑԸ ԱԽՊԱՐ, (հայատառ տաճկաբարբառ) ամէնօրեայ լրագիր: Կ. Պ. Խմբ. Ց. Թօլայեան: Ե. Տարի. 120 ղշ.:
77. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս — Նոր եւ ընդարձակ Տեսական եւ Գործնական Թուաբանութիւն: Հտր. Ա.: Կ. Պ. 8 ղշ.:
78. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ — Ստորագրութիւն հռչակաւոր Վանուց Ս. Գէորգայ որ ի Մուղնի: Թաւրէզ. 40 էջ:

79. ՄՇԱԿ, գրականական եւ քաղաքական լրագիր: ԺԷ. Տարի: Տփ. Խմբ.-Հրտ. Գ. Արծրունի. 10 ր.:
80. ՄՈՆԹԷՊԷՆ ՔՍԱՎԻԷ — Մարի եւ Սիմոնէ. Թրգմ. Միհրան Զօպանեան: Կ. Պ. Հտր Ա. եւ Բ. 5 ղշ.:
81. ՄՈՒՐՃ, քաղաքական, հասարակական-գրական ամսագիր: Խմբ.-Հրտ. Աւտ. Արասխանեանց: Ա. Տարի: Տփ. 10 ր.:
82. ՄՕԶԵԱՆ Ց — Հաւաքածոյ համընտիր քերթուածոց գաղղիական մատենագրութեան (գաղղ. եւ հայ.) Կ. Պ. 75 էջ. 3 ղշ.:
83. ՄՕՊԱՍԱՆ (ԴԸ) Գ. — Երեք զրոյց. Ա. Վախկոտ. Բ. Գիւղի Մուրացկան. Գ. Ջիւուր Դիւքին: Թրգմ. Աղ. Ծատուրեան: (Արտատպած "Հանդէս Գրականական եւ Պատմական" թերթէ:) Մոսկուա, տպ. Օ. Հերբէկ:
84. ՄՕԶԵԱՆ Մ. Գ — Ջուարճալի խաղ մը. Բախտացոյց ընտանեկան (թրգմ.) Կ. Պ. տպ. Ն. Կ. Պէրպ. 75 էջ. 3 ղշ.:
85. ՅՈՎՆԱՆԵԱՆ Հ. Ղ. — Ծաղիկ Ս. Գրոց: Գ. Տպագր. Վիեննա, տպ. Մխիթ. 266 էջ. 2 Ֆր. 25 սանդ. = 1 ր.:
86. ՅՈՎՆԱՆԵԱՆ Ս — Կրթական զործ. (ընտանիքների եւ ուսումնարանների համար:) Կ. Պ. 3 ղշ.:
87. ՆԱԶԱՐԵԱՆՑ Յ — Օրացոյց 1890 Թուի (Դ. Տարի.) Տփ. տպ. Մարտ. 255 էջ. 20 կ.:
[Քննդտ. Մուրճ. 1890. Թ. 1:]
88. — — Ընտիր հատուածներ: Մասն Ա. Արձակ: Բ. Տպագր. Տփ. Մարտ. 1 ր. 25 կ.:
[Քննդտ. Արձագ. 1889. Թ. 4: Մուրճ, 1889, Թ. 2:]
89. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ Տ — Հայ ժողովրդական հէքիաթներ: Գիրք Ե. Տփ. տպ. Մ. Վարդ. 144 էջ:
[Քննդտ. Նոր-Դար. 1889. Թ. 25: Մուրճ. 1889, N. 3:]
90. ՆԵՂՈՍ, շաբաթաթերթ։ Խմբ. Ա. Ռշտունի: Աղեքսանդրիա. տպ. Փ. Միզրահի:
91. ՆՈՐԱՅՐ Բ. — Տեղեկութիւն ի գիրս պատմութեան Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողիկ կոչեցելոյ: (Արտատպած "Հանդէս Գրակ. եւ Պատմ." թերթէ:) Մոսկուա, տպ. Օ. Հերբէկ, էջ 42:
92. ՆՈՐ-ԴԱՐ, ամէնօրեայ թերթ քաղաքական եւ գրական: Զ. Տարի: Տփ. Խմբ:-Հրատ. Ս. Սպանդարեան. 10 ր.:
93. ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ — Հաւաքածոյ ընտիր երգոց: Կ. Պ. 5 ղշ.:
94. ՆՈՒՊԱՐԵԱՆ Մ — Բառարան ֆրանսերէն-հայերէն: Թերթ 1—30: Կ. Պ. տպ. Գ. Պաղտատլեան:
95. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ Ս — Հայկական նշանագրեր: Պետերբ. 25 կ.:
96. ՇԱՀԻՐ (Խաչատուր Դերբենդցի) — Ծաղիկ ժամանակի երգերը: Տփ. տպ. Ց. Մարտ. 80 էջ, 50 կ.:
[Քննդտ. Նոր-Դար. 1889. Թ. 90:]

(Շարունակելի)

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՐԱԽԱՅՐԻՔ Մ'ԱԼ

Թերթիս 1888 տարւոյ 8ᵉ թուոյն մէջ հաւանականաբար 1561ին տպուած Տօնացոյցի մը գիւտն աւետուեցաւ։ Տարի մ'ետքը նոյն թերթին մէջ (1889, Թ. 10) տեղեկութիւն տրուեցաւ աւելի հնագոյն հայ տպագրական երախայրիքի մը, 1512ին տպուած Պարզատումարին[1] վրայ։ Այս երկու յօդուածներն հայ տպագրութեան պատմութեան վրայ մեծ լոյս սփռելու պատճառ եղան։ Ներկայ 1890ին Բուզանդիոն ամսաթերթին 3ᵉ թուոյն մէջ գրուած "Առաջին դար հայկական տպագրութեանց" անուամբ յօդուած

[1] Յետոյեյ կ'անուանէ Բուզանդիոն (1890. Թ. 3) զայս Պարզատումար։ Սակայն մատեանին ճակատը դրոշմուած է "Այս է պարզատումար հայոց," ինչպէս Թերթիս յիշեալ յօդուածին մէջ նշանակուած է։

digitised by A.R.A.R.@

մը, որ թերթիս յիշեալ յօդուածներուն հետ ձեռնհձեռն տալով՝ փոխանակաւ լուսաւորեցին սոյն պատմութեան մութ կողմերը։ Ասով ստու-գուեցաւ՝ թէ ցայսօր մեզ ծանօթ հայ հնագոյն տպագրութիւնք հետեւեալք են, իրենց հնութեան կարգաւ.

1· Պարզատումար[1] տպեալ 1512ին Հընկերբ· ի Վենետիկ[2] Տպրն· D. I. Z. A ի ի Մատգրնի· Վիեննայի Մխիթարեանց
2· Աղթարք Հընկերբ· " 1513ին " " " " " Վենետկի "
3· Ուրբաթագիրք " " " " " " " " " "

Այս երեքը նոյն տառերով տպուած են։ Յաջորդ եօթն Աբգարեան տպագրութիւններն թէեւ երկու տարբեր քաղաքներու մէջ լոյս տեսած են, սակայն տառերը նոյնպէս ճշդիւ նոյն են։

1· Սաղմոս տպեալ 1565ին ի Վենետիկ Տպրն· Աբգարու ի Մատգրնի Միլանու
2· Փոքր քերականութիւն (այբբենարան) " 1567ին ի Կ· Պոլիս " " —
3· Տոնացոյց " 1568ին " " " ի Մատգրնի· Վիեննայի Մխիթարեանց
4· Տաղարան[3] " " " " " " Ներլայի Հայոց
5· Ժամագիրք " " " " " " Վենետկի Մխիթարեանց
6· Պատարագամատոյց " " " " " " " "
7· Մաշտոց " 1569ին " " " " " "

Աբգարու այս եօթն հրատարակութիւններէն Տօնացոյցն, որոյ մասին Հ. Ղ. Ալիշան 1869-ին գրէ՝ (Յուշիկք, հտր. Ա. 536) թէ ինք չէ տեսած, ինչպէս նաեւ ցայսօր ոչ ոք այս մասին գրած է, Միաբանութեանս մատենադարանն օրինակ մը ձեռք բերած ըլլալով, կ'ուզենք հետաքրքիր բանասիրաց ծանօթացընել։

Մատեանս վեշտասանածալ է. (թերթն՝ 16 թուղթ.) էջն 8 սանդմ. երկայն եւ 5½ սմ. լայն է. իւրաքանչիւր էջը 10 տող։ Մինչեւ Ղ թերթ կը նշանակուի թերթերու թիւն տառերով, այնուհետեւ զանց կ'առնուի։ Միայն առաջին թերթին մէջ նոյն գրով կարմրագոյն դրոշմեալ բազմաթիւ տողեր ունի, յաջորդ թերթերու մէջ կարմիր գնոյ հետք չկայ։ Ամբողջ մատեանը նոյն գրով դրոշմուած է. սակայն Ջատկէն եսեւ՝ որ ունի փոքրիկ վերնազարդ մը եւ թռչնագրեր, կըտեսնուին տեղ տեղ թռչնագրեր։

Մեր օրինակին սկիզբէն՝ առաջին թղթէն ետեւ (որ կայ) կը պակսի ութը թուղթ. իսկ վերջէն՝ 8ᵗ թերթին վերջերէն սկսելով՝ կը պակսի 2—3 թերթ։

Մատենին մէջ տպագրողին կամ հրատարակչին վրայ տեղեկութիւն ամենեւին չենք տեսներ։ Որչափ կ'երեւայ, ի սկզբան գրուած յիշատակարանին վերջը պիտի ըլլար անշուշտ, սակայն մեր օրինակին այս մասը կը պակսի։

Առաջին թերթին առաջին իջին վրայ կայ միայն երկաթագիր Ա մը, առաջին թերթը ցուցընելու համար։ Երկրորդ էջն՝ է

Ով հանդիպի սյսմ գրք
իս նայ ողորմիս տայ գրչ
իս, որ[1] դ· ււրի
նակ գրի եւ · դ· վարդետի
առջեւն գրեցի· հին ււր
ինակն· զարութե եւ զաղ
աշխարութե · հարցներ
ն չէր գրած եւ մեք գրեցա
ք · գրած էր ի բազում տե
ղեք թէ կամիս գայս ասա

Յաջորդ երեսները կը պակսին։ Իսկ բուն գործոյն մէջ տպագրիչն քանի մը տեղ ինքնին կը խօսի, այսպէս. "զոր կա ի ցուցակի„· (Ա· թերթ) որմէ կ'երեւայ թէ մատեանն սկիզբը կամ վերջը ցուցակ մ'"ունի։ Դարձեալ՝ "խրատքն գրեալ է ի միուս կողմն„· (Բ· թերթ) "բայց ոմանք ի ժամատուն ասեն եւ մեք զայն եմք տեսեալ„· (Ե· թերթ) "զմեղապարտ յիշեցէք„· (Ե· թերթ) "Ով տաւնասէրք գիտենաք որ ոմանք գ̃ ււր տաւնեն զհոգեգալուստն . . .„ ։

---

[1] Ամենէն յառաջ գնելիւս պատճառն է՝ որ Ուրբաթագիրքը կը սկսի զարդագրով, իսկ Պարզատումարը պարզ երկաթագրով, եւ հազիւ մատենին կիսէն ետքը կը գրուի զարդագիր, որ անշուշտ տպագրական յառաջադիմութեան նշան է։ Բողոմոլեցի այն խօսքն՝ թէ այս երեք մատեաններն "իբրեւ առանձին անձի փորձեր . . . եւ իբրեւ անօգուտ . . . եւ վնասակար . . . չեն կարող հայ տպագրութեան պատմութեան մէջ փառաւոր տեղ գրաւել„, եւ թէ "Հայ տպագրութիւնն իւր փառաւոր ծոցումն պիտի մատնանիշ անէ միշտ յանձին Աբգար Դպրի,„ ինծի միակողմանի եւ նոյն իսկ անըմբռնելի կ'երեւայ, քանի որ խնդիրը մատենին տպագրութեան վրայ է, եւ ոչ բովանդակութեան։ Իսկ ինչ որ Նոր-Դար (1890, Թ. 45) կը գրէ՝ իբր թէ առաջին հայ տպագրութիւնն 1452ին եղած ըլլայ, եւ անկէ հետեւութիւններ կ'ուզէ հանել, մեծ անմտադրութեան օրինակ է։ Տարակոյս չկայ որ զայս առած է Բողոմոլեցի յիշեալ յօդուածէն, (էջ 92, տող 21) ուր 1452 տպագրական սխալը կարդալու է 1552, վասն զի Հայոց թուականն՝ ՌԱ կը գրուի։ Բաց անկէ՝ որ այս տեղ յիշուածն գրչագիր յիշատակարանն է տպագրին. կարելի էր մտագիր ըլլալ՝ որ Գուտենպերկի գիւտն 1455ին եղած էր։

[2] Ոչ ի Լեմպէրկ, ինչպէս կը կարծէ Բողոմոլեցի յօդուածագիրն. վասն զի Քարմատաննենցի Սաղմոսին վերջաւոր նմանութենէն չի հետեւիր այս, քանի որ Քարմատանենց իւր տառերն Լեմպէրկ չգտաւ, այլ տարի մ'աշխատեցաւ հոն նոր տառեր շինել տալու։

[3] Այս Տաղարանի մասին թերթիս մէջ (1888 Թ. 8) գրուած ենթադրութիւններն Բողոմոլեցի յօդուածոյն մէջ Աբգարու Սաղմոսին նմանահանութեան հրատարակութեամբն ամբողջովին կը տապալին։ Տաղարանին գիրն ճիշտ այս Սաղմոսին գիրն է առանց եւ ոչ իսկ փոքր զանազանութեան. տպագրութեան տեղն է Կ. Պոլիս եւ տարին պէտք է կարդալ 1568 եւ ոչ՝ 1561, վասն զի Աբգար հազիւ 1564ին Հռոմ եկաւ եւ տպարան բանալու խորհուրդն յղացաւ։

---

[1] Այս տեղ դատարկ թողուած է, որպէս զի յետոյ հրատարակիչն իւր ինքնագիր ստորագրութիւնը դնէ, որ դժբախտաբար մոռցուած է։

digitised by A.R.A.R.@

Թէեւ մատեանս պակասաւոր ըլլալուն՝ տպագրութեան ժամանակին եւ տպագրչին մասին նոյն իսկ մատենէն վկայութիւն չունինք. բայց որովհետեւ Մաղաքիա Արբեղայ կը յիշէ[1] որ Աբգար դպիր ի Կ. Պոլիս Տօնացոյց մը տպած է, եւ մեր այս հին Տօնացոյցն ճշդիւ Աբգարու Սաղմոսին եւ Տաղարանին գիրն ու տպագրութիւնն ունի, ամենեւին չի կրնար տարակուսուիլ մատենիս Աբգարու յիշեալ Տօնացոյցն ըլլալուն։

Հ. Գ. Գ.

---

## † ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Տարւոյս Մայիս 19/31ին վախճանեցաւ հայ մատենագրութեան մեծ Մեկենասներէն մին՝ Մեծ. Մկրտիչ Սանասարեան 72 տարուան հասակին մէջ։ Այս նշանաւոր Բարերարը մեծապէս նպաստամատոյց եղած է մեր նոր մատենագրութեան՝ օժանդակելով բազմաթիւ անձանց, որոնք եւրոպական բարձրագոյն ուսումնարանները կը յաճախէին ուսումնին կատարելագործելու նպատակաւ, նպաստելով բազմաթիւ հայ դպրոցաց եւ հաստատութեանց հիմնարկութեանն ու պահպանութեանը, եւն եւն։ Մեծ արդիւնք ունի նաեւ այնու՝ որ լաւ ըմբռնելով կրթեալ ուսուցչաց մեծ պակասը մեր մէջ՝ մասնաւոր փոյթ ունեցած է նոյնպիսի ուսուցիչներ պատրաստել։ Իւր բարեգործական ձեռնարկութեանց պսակն եղան Վանայ Օրիորդական վարժարանը՝ Մուշեղեան անուամբ, եւ մանաւանդ Կարնոյ մէջ հիմնած Սանասարեան ուսումնարանն՝ իրեն կից ունենալով Արուեստագիտական դպրոց մը։ Այս օգտակար հաստատութեան ապագայն ալ ապահովցուցած է մեծ գումար մը կտակելով։ Գիտութեանց յառաջադիմութեան, ուսմանց զարգացման եւ մատենագրութեան ծաղկելուն անհրաժեշտ պայմաններէն մին է նաեւ նիւթական օժանդակութիւն եւ այսպիսի հաստատութեանց հիմնարկութիւնը. այս նկատմամբ մեծ արդիւնք ունի սոյն նշանաւոր Մեկենասը մեր մատենագրութեան համար, որով եւ այսպիսի անձի մը կորուստն արդեամբք մատենագրական կորուստ է մեզի համար։

[1] Յուշիկք, անդ։

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

---

## ԾԱԳՕՑԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

### ՏՐԱՊԻԶՈՆԻ ԿԵԱՆՔԷՆ ՔԱՂՈՒԱԾ

Տէմիրմին մեռաւ տունը ղազմայ չգտնուեցաւ:
Կուշտը անօթիին մանր բրդէ կու:
Հաստ ու պարակ մէկ գին է, վայ պարակ մանողին:
Նէ սուրբին մատաղ խոստացիր, նէ տղին պսմ:
Մարդ մարդու հալ չգիտէ, կէս գիշերին ժամ կը կանչէ:
Այուին կաշին տուին քի հաալ էրէ, կերաւ հախին սեպեց:
Էշը յիշէ, մանգուլը հազր էրէ:
Կատուն մսին չհասաւ, օրս ուրբաթ է ըսաւ:
Տէրտէրին տղան եա սուրբ կ՚ըլլայ եա թուրք:
Տէրէն չտեսած՝ փաչաներդ վեր մի վերցներ:
Անուշ լեզուն օձը ծակէն հանէ կու:
Ճանը սատկելու օրը որ գայ, կ՚երթայ ճամիին դուռը կը պառկի:
Շատ խաղ կիտիմ, ամմա ծան չունիմ քի կանչիմ:
Թէմպէլին հարցուցին քի ինչէն չիս պանիս էր: Ասօր կիրակի է, ըսաւ:
Ես աղա, դուն աղա, մեր կօրկոտը ո՞վ աղայ:
Խեւին հացը խելօքին փորը:
Մարդ մարդու քահանայ, մարդ մարդու սատանայ:
Քիչ քնցիր շուտ ղարծիր:
Խլլուին հարցուցին քի քիթդ ինչո՞ւ կը վազէ: Ամեռ է, ըսաւ: — Ես քեզի ամառն ալ գիտեմ ձմեռն ալ:
Զօփճին տուն եկաւ, չօփճիին կնիկը պանի նստաւ:
Գեղացին որ չփանայ, չարուխ պէտք է քի դիմանայ:
Խլլուին պարեւ տալու ըլլաս, խլլինքը վրադ կը նետէ:
Պտուկը կլօրեցաւ իր խուփը գտաւ:
Լեզուն ոսկոռ չունի, ինտոր ըսիս՝ տառնայ կու:
Վեր թուքնիմ պույուխս, վար թուքնիմ միրուքս:
Միրուք չունիմ՝ որ խօսքս անցնի:
Տունը շապիկ, կատուն վարտիք:
Ընկուզ առնող չէ, շխրցնող է:
Աղջիկս քեզի կ՚ըսիմ, հարսս դուն իմացիր:
Թող չըսեն քի էշ է. թող ըսեն քի զէշ է:
Գող սրտի դող:
Կռիւէն ետքը փիշմանութիւն է:
Փիս շունը նէ ինքը կ՚ուտէ, նէ ուրիշին կերցնէ կու:
Փիս մարդը զատկին ալ փիս կ՚ըլլայ:
Խապարին աղէկը կնիկներէն առ:
Խեւը ըսաւ խելօքը հաւատաց:
Տունը սատանայ, դուրսը քահանայ:
Մեր տունը փոս, ամէն խեւը հոս:
Գուղդ միակ պահէ, դրացինդ գող մի բռներ:
Էշէն իջաւ. գօ՜, գօն վար չդրաւ:
Էշը մնծցաւ փալանը պզտիկցաւ:
Էշուն հեծեր էշ կը փնտռէ:
Մենծ էշը ախոռը մնաց:
Թէմպէլը էշուն քեռի կանչէ:
Սոխ ու սխտորը հիսապ էնողը փաշայ չ՚ուտեր:
Գնայ մեռիր, էկէ սիրիմ:
Տէվէին հարցուցին քի ծիտդ ինչէն ծուռ է: Իմ որ տեղս շիտակ է, ըսաւ:
Խնտումին ախպարը լացն է:
Ածական հաւը կոկոան կ՚ըլլայ:
Ալուրս մաղեցի, մաղս կախեցի:
Մուկը ծակը չէ հաւքեր, ցախ աւելը պոչն է կապեր:
Աղքատը ունի հաց ու պանիր, գիշերը քունը չի տանիր:
Տո՞ւն ունիս. մէկ դին փուշ դիր:
Մտնել լողալն ալ գիտէ, ելլել դողալն ալ: